ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 27 - 28 (16524) ՇԱԲԱԹ, 8 ԱՊՐԻԼԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆ Է»

ՎՐԱՍՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒ ԱՄԵՆԱՄՅԱ ՈՒՂԵՐՁԸ

Ապրիլի 7-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ամենամյա ուղերձով ելույթ ունեցավ երկրի օրենսդիր մարմնի պատգամավորների առջև: Խորհրդարանում նախագահի ելույթին ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի գործադիր, դատական իշխանությունների ղեկավարները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ելույթին ներկա էին նաև Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարները, որոնց թվում էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Վրաստանի նախագահը, սկսած 2014թ., թվով 4 ամենամյա ելույթում, անդրադարձավ երկրի ներքին եւ արտաքին իրավիճակի հարցին, խոսեց տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումների ընթացքին, ծառացած մարտահրավերներին:

Ելույթի սկզբում Վրաստանի նախագահը երկրի քաղաքական բոլոր ուժերին, խորհրդարանական մեծամասնությանը, փոքրամասնությանը,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԿՑԱՆԿԱՆԱՅԻ, ՈՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԵԼՈՒՅԹԸ ԼԻՆԵՐ ԱՌԱՎԵԼ ԽՈՐ ԵՎ ՕԲՅԵԿՏԻՎ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, մեկնաբանելով երկրի խորհրդարանում նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու ամենամյա ելույթը, նշեց, որ ինքը կցանկանար, որպեսզի նախագահի ելույթը լիներ շատ ավելի լայնընդգրկուն, առավել խոր եւ օբյեկտիվ:

- Դա ավանդական ելույթ էր, որտեղ նախագահը ներկայացրեց իր նկատառումները ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ: Կարող եմ ասել, որ մեր երկրում մի շարք ուղղություններով, ինչպիսիք են՝ դատարանը, էկոնոմիկայի զարգացումը, ժողովրդավարությունը եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացումը, ոչ միայն մեր, այլեւ գործընկեր երկրների կարծիքով հիանալի առաջընթաց է ապրել: Կցանկայի, որպեսզի նախագահի ելույթը լիներ առավել լայնընդգրկուն, առավել խոր եւ առավել օբյեկտիվ,- հայտարարեց վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՆԱՏՕ-Ի ՕՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 2-ին Վրաստանում մեկնարկեցին ՆԱՏՕ-ի օրերը: Միջոցառման շրջանակներում նախատեսված են տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, թատերական ներկայացումներ, մրցույթներ եւ այլն:



ՆԱՏՕ-ի օրերի պաշտոնական բացման արարողությանը ներկա էին Եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Վիկտոր Դոլիձեն եւ ՆԱՏՕ-ի ու Եվրամիության վերաբերյալ տեղեկատվական կենտրոնի տնօրեն Նինո Բոլքվաձեն:

Ապրիլի 3-ին, ՆԱՏՕ-ի օրերի շրջանակներում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին այցելեց ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառմանը: Իր խոսքում նախագահը խոսեց ՆԱՏՕ-ի նշանակության եւ ալյանսին անդամակցելու Վրաստանի քաղաքականության մասին: Հանդիպմանը ներկա էին նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին: Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Դավիթ Ռաքվիաշվիլին, գործադիր իշխանության եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

ՆԱՏՕ-ի օրերը կշարունակվեն Վրաստանում մինչեւ ապրիլի 11-ը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին կենտրոնական եւ տեղական իշխանության, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների, դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային գործակալությունների ներկայացուցիչներին ներկայացրեց երկրի կառավարության կողմից մշակված 2017-2020 թվականների գյու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 9-Ը ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ապրիլի 9-ին Վրաստանում կնշվի ազգային միասնության օրը:

Քսանութ տարի առաջ՝ 1989 թվականի ապրիլի 9-ին, Թբիլիսիի կենտրոնում, խորհրդարանի շենքի մոտ, խորհրդային զինված ուժերը դաժանորեն ճնշեցին խաղաղ ցույցը, որի արդյունքում զոհվեց 21 մարդ, հազարավոր մարդիկ թունավորվեցին: Երկու տարի անց, նույն օրը, Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Վրաստանի անկախ պետականության վերականգնման հռչակագիրը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԵՍ ՄԻՇՏ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ ՃԱՆԱՉԵԼ ՎՐԱՑՈՒՆ»

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, անցյալում լեգենդար ծանրամարտիկ Յուրի Վարդանյանը «Գրուզիա սպուտնիկ» գործակալության հետ կիսեց իր տպավորությունները Վրաստանում կյանքի եւ աշխատանքի առանձնահատկությունների մասին:

Մանկության հիշողությունները

Վրաստանից իմ առաջին տպավորությունները կապված են մանկությանս հետ: Դեռեւս դպրոցական տարիներին արձակուրդներին հաճախ էի գալիս Թբիլիսի, հյուրընկալվում մորաքրոջս մոտ, եւ իմ մանկական շատ հիանալի հիշողությունները կապված են անմիջականորեն Վրաստանի հետ: Երբ երկուսուկես տարի առաջ՝ որպես Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, ժամանեցի Թբիլիսի, իմ մանկական տպավորությունները միայն հաստատվեցին: Ես ներգրավվեցի հենց այն ջերմ, բարյացակամ մթնոլորտում, հանձինս վրաց ժողովրդի, հանդիպեցի նույն բարեկամասեր եւ հյուրընկալ մարդկանց:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊՈԼԻ ՏՆՕՐԵՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 6-ին, պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Եվրոպոլի տնօրեն Ռոբ Ուենռայթը: Այցի շրջանակներում, կայացան Եվրոպոլի ղեկավարի հանդիպումները Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլու, Վրաստանի պետական անվտանգության ծառայության պետ Վախթանգ Գումելաուրու հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին միջազգային ահաբեկչության դեմ Եվրոպոլի ու Վրաստանի պետական անվտանգության ծառայության միջեւ երկկողմ համագործակցության հարցերը:

Հանդիպման շրջանակներում, ստորագրվեց Վրաստանի եւ Եվրոպոլի միջեւ օպերատիվ եւ ռազմավարական համագործակցության մասին պայմանագիրը: Վրացական կողմից այն ստորագրեց Վրաստանի ՆԳ նախարար Գիորգի Մղեբրիշվիլին: Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, Վրաստանը՝ որպես Եվրոպոլի օպերատիվ գործընկեր երկիր, ինչը Վրաստանի իրավապահ մարմիններին հնարավորություն կընձեռի Եվրոպոլի հետ համագործակցեն ինչպես օպերատիվ, այնպես էլ՝ ոչ օպերատիվ ուղղություններով:

ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ինստիտուցիոնալ համագործակցության եւ երկխոսության կոչ արեց:

- Ես ընտրություններից հետո բազմիցս ասել եմ, որ ծառայում եմ Վրաստանի բոլոր քաղաքացիներին եւ բոլոր ընտրողների նախագահն եմ: Հենց այդպես էլ դուք՝ անկախ կուսակցական պատկանելությունից, ողջ Վրաստանի նախարարներն ու խորհրդարանականներն եք, եւ սպասում եմ այն ժամանակներին, երբ հաղթող ուժը կսկսի փնտրել դաշնակիցների ու ոչ թե թշնամիների, քանի որ հավատում եմ, որ ամենամեծ հավակնությունը, որը կարող է ունենալ քաղաքագետը, երկրի եւ հասարակության միավորումն է,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Երկրի ղեկավարն իր խոսքում կանգ առավ Եվրամիության հետ հարաբերություններում վերջին ժամանակներս իրականացված վիթխարի տեղաշարժերին, մասնավորապես, Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի, ազատ առեւտրի պայմանագրի կիրարկման եւ բառացիորեն վերջերս Եվրամիության, Շենգենյան գոտու երկրների հետ անայցեգրային պայմանակարգի հաստատման վրա:

Անդրադառնալով տնտեսական ոլորտում իրականացված միջոցառումներին՝ նախագահն առանձնակի ընդգծեց ազգային տարադրամի՝ լարիի կայունացման միտումն ու երկրի տնտեսական աճի խոստումնալից առաջընթացը՝ հույս հայտնելով, որ գործադիր իշխանությունները, ֆինանսական կազմակերպությունները հետայսու էլ նպատակամղված գործունեություն կծավալեն տարադրամի կայունացման եւ տնտեսական աճի իրատեսական զարգացման համար:

Վրաստանի նախագահն իր ամենամյա ելույթում անդրադարձավ նաեւ հասարակական կյանքի առանձին թերացումներին, խոսեց դատական իշխանության, լրատվամիջոցների, անկախության ապահովման նշանակության մասին եւ պատրաստակամություն հայտնեց աջակցել դրանց հզորացմանը:

ԿԱԽԻ ԿԱԼԱՁԵ. «ՆԱԽԱԳԱՀՆ Է'Լ ԱՎԵԼԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՊԵՏՔ է ՆԵՐԿԱՅԱՆԱՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ»

- Նախագահը, ցավոք, ոչ մի նոր բան չասաց, այն, ինչ ասում էր, արդեն լսել էինք, թեպետ կարծում եմ, որ քանի որ նախագահը գալու էր խորհրդարան, որտեղ գտնվում էին վարչապետը, կառավարությունը եւ դիվանագիտական կորպուսը, առավել նախապատրաստված պետք է լիներ,- մեկնաբանելով Վրաստանի նախագահի ելույթը՝ հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն:

Փոխվարչապետի խոսքով, ինքը համաձայն չէ էկոնոմիկայի հետ կապված նախագահի հայտարարության հետ:

- Համամիտ չեմ տնտեսական բաժնի հարցով նրա նկատառումների հետ, քանի որ բոլոր նախագծերը, որոնք իրականացվում են Վրաստանում՝ լինեն ենթակառույցային, էներգետիկական կամ այլ ուղղության, պայմանավորված են նրանով, որ երկրում ստեղծվեն աշխատատեղեր: Ամենամեծ պահանջարկն ու ամենամեծ հիմնախնդիրը դա է, եւ նման մասշտաբային նախագծերը երկրի տնտեսական զարգացման, էկոնոմիկայի առաջընթացի ու նոր աշխատատեղերի ստեղծման նախադրյալ են, ինչն էլ ապացուցվեց այդ նախագծերով,- հայտարարեց Կախի Կալաձեն:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ղատնտեսական տարածաշրջանների զարգացման ազգային նոր ռազմավարությունը՝ նշելով, որ գյուղատնտեսության զարգացման նոր միտումը գլխավորապես հենվում է եվրոպական պրակտիկայի վրա:

Գյուղատնտեսական տարածաշրջանների զարգացման կառավարական նոր ռազմավարությունը ողջունեցին Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Յանոշ Հերմանը: Նրա խոսքով, Եվրամիությունը շարունակում է աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսության զարգացմանն այն հաշվով, որպեսզի Վրաստանի բոլոր տարածաշրջաններում ստեղծվեն տնտեսական եւ սոցիալական նոր հնարավորություններ:

Նոր ռազմավարության ընդունումից հետո, հիմնվեց միջգերատեսչական համագործակցության խորհուրդ, որը քննարկելու է գյուղատնտեսական շրջանների զարգացման հարցը: Խորհուրդը գլխավորելու է գյուղատնտեսության նախարարությունը, այն Եվրամիության ENPARD ծրագրի միջոցով ֆինանսավորելու է Եվրամիությունը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը աշխատանքային հանդիպում ունեցավ մունիցիպալիտետի վարչական միավորներում վարչության նախագահի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը խոսեցին մունիցիպալիտետի գյուղերում ընտանի կենդանիների պատվաստման, բրուցելոզի համատարած ուսումնասիրությունների եւ անասունների նույնականացման-գրանցման միջոցառումները ժամանակին ու արդյունավետ իրականացնելու մասին: Վարչության նախագահի ներկայացուցիչները օգնություն են ցուցաբերելու պարենի ազգային գործակալության աշխատակիցներին գյուղերում վերոնշյալ միջոցառումների կազմակերպման գործում:

ՆՈՐՈՒՅԹ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ՝ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՂՏՈՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Մինչեւ 2 կգ կենցաղային աղբը փողոցում թափելու դեպքում, քաղաքացին կտուգանվի 80 լարիով, իսկ 2 կգ-ից ավելիի դեպքում՝ 150 լարիով:

Այդ մասին հայտարարեց «Թբիլսերվիսխումբ»-ի տնօրենի առաջին տեղակալ Դավիթ Դոլիձեն: Ապրիլի 3-ից մայրաքաղաքի փողոցներում կհայտնվեն «Թբիլսերվիս» խմբի վերահսկման ծառայության հետիոտն տեսուչները, ովքեր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց տուգանքներ կսահմանեն կենցաղային կամ այլ տեսակի մնացորդները թափելու համար:

Մինչեւ 2 կիլոգրամ կենցաղային աղբի կատեգորիայում ներառված են նաեւ սիգարետի մնացորդը: Ընտանի կենդանու կղանքով փողոցի աղտոտման դեպքում՝ տերը կտուգանվի 50 լարիով: Մեկ խորանարդ մետր շինարարական աղբը փողոցում թափելու դեպքում, ֆիզիկական անձի համար տուգանքը կկազմի 200 լարի, իսկ իրավաբանական անձի համար սահմանվում է 500 լարիի տուգանք: Մեկ խորանարդ մետրից ավելի շինարարական աղբի դեպքում, ֆիզիկական անձը տուգանվում է 500, իսկ իրավաբանական անձը՝ 1500 լարիով: Իրավախախտման կրկնության դեպքում, տուգանքները կրկնապատկվում են:

- Սկզբնական փուլում տեսուչները կգործեն քաղաքի կենտրոնական հատվածի զբոսաշրջության գոտիներում, զբոսայգիներում, պուրակներում, հասարակական մարդաշատ վայրերում, որտեղ աղտոտման դեպքերը ավելի հաճախ են վավերացվում: Տեսուչները հետիոտն շրջելու են վերոնշյալ վայրերում: Նրանք մեքենաներով չեն շրջելու: Քաղաքացու կողմից մեքենայից աղբը գցելու դեպքում, փաստը վավերացվելու եւ արձագանքման համար փոխանցվելու է համապատասխան գերատեսչությանը: Դա պարեկային ոստիկանությունն է, որը իրականացնելու է համապատասխան արձագանքում,- հայտարարեց Դավիթ Դոլիձեն: Նրա խոսքով, ապրիլի 3-ից երկու շաբաթվա ընթացքում տեսուչները քաղաքացիներին կզգուշացնեն, որ աղբը փողոցում չթափեն: Տեսուչները կլինեն հատուկ զգեստով եւ զինված համապատասխան տեսախցիկներով ու լուսանկարչական սարքերով:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ապրիլի 3-ին պայթյուն է տեղի ունեցել Պետերբուրգի մետրոպոլիտենի վագոնում «Սեննայա պլոշչադ» եւ «Տեխնոլոգիչեսկի ինստիտուտ» կայարանների միջեւ ընկած ուղեմասում: Պայթյունի արդյունքում զոհվել է 14 եւ վիրավորվել շուրջ հինգ տասնյակ մարդ: Ավելի ուշ, «Պլոշչադ վոստանիա» կայարանում հայտնաբերվել եւ վնասազերծվել է ինքնաշեն պայթուցիկ սարք:

Պետերբուրգում եռօրյա սուգ է հայտարարված մետրոյում կատարված ահաբեկչության զոհերի հիշատակին:

Պայթուցիկ սարքը կարող էր գործողության մեջ դնել 23-ամյա ղրղզ, ներկայումս Ռուսաստանի քաղաքացի Աքբարժոն Ջալիլովը, որը կապված է Ռուսաստանում արգելված արմատական իսլամիստական խմբավորումների հետ:

ԱՄՆ

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ ՍԻՐԻԱՅԻ ԱՎԻԱԲԱԶԱՅԻՆ

Ամերիկյան նավերը թեւավոր հրթիռներով հարված են հասցրել Սիրիայի տարածքին: Ինչպես հայտնել է Պենտագոնի ներկայացուցիչը, 59 «Թոմահավք» հրթիռներ են արձակվել Հոմս քաղաքի շրջանում սիրական կառավարական զորքերի «Շայրաթ» ավիաբազայի տարածքին:

Այդ ավիաբազայից ապրիլի 4-ի առավոտյան սիրական օդուժը հարված է հասցրել Իդլիբի նահանգի Խան Շեյխուն քաղաքին՝ ենթադրաբար կիրառելով քիմիական զենք: Այդ գրոհի զոհ են դարձել տասնյակ խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ երեխաներ:

Ինչպես ճշտել է ամերիկացի մեկ այլ պաշտոնյա, Միջերկրական ծովից նավերի գրոհին են ենթարկվել ավիաբազայի տարածքի մի քանի ռազմական օբյեկտներ՝ թռիչքավայրէջքային գոտիները, ինքնաթռներն ու ուղղաթիռները, ինչպես նաեւ լցակայանները:

Նրա խոսքով, հրթիռային հարվածներն ուղղված չեն եղել Սիրիայում ռուսական ռազմական օբյեկտներին: Ավիաբազայում տեղաբաշխված էին մի խումբ ռուսներ, բայց ԱՄՆ-ը վաղօրոք նրանց նախազգուշացրել էր նախապատրաստվող ռազմական հարվածի մասին:

Ռուսաստանը դա գնահատել է՝ որպես ագրեսիա Սիրիայի դեմ:

ՈՒԿՐԱԻՆԱ

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Եվրոպայի խորհրդարանը (ԵԽ) քվեարկել է Ուկրաինայի քաղաքացիների համար այցեգրային ռեժիմի պարզեցման օգտին: Համապատասխան բանաձեւն ընդունվել է ապրիլի 6-ին կայացած նստաշրջանում:

Խոսքը վերաբերում է այցեգրերի վերացմանն Ուկրաինայի այն քաղաքացիների համար, ովքեր ունեն կենսաչափական անձնագիր եւ ԵՄ են մեկնում կարճաժամկետ ուղեւորություններով՝ 90 օրվանից ոչ ավելի տեւողությամբ: Սույն միջոցը տարածվում է տուրիստական կամ գործարար ուղեւորությունների վրա, եւ ԵՄ-ում աշխատելու իրավունք չի տալիս, նշված է փաստաթղթում: Իռլանդիա եւ Մեծ Բրիտանիա ուղեւորությունների վրա սույն նորամուծությունները չեն տարածվում:

Սպասվում է, որ Ուկրաինայի համար այցեգրային ռեժիմի ազատականացումն ուժի մեջ կմտնի հունիսի սկզբին:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱԴԱՀՈՒԿԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 5-ին Թբիլիսիում, ՄԱԿ-ի համաշխարհային տուրիստական կազմակերպության (UNWTO) հովանու ներքո, անցկացվեց Եվրոպայի եւ Ասիայի լեռնադահուկային առողջարանների երրորդ միջազգային խորհրդաժողովը, որին մասնակցեց 35 երկրների շուրջ 250 պատվիրակ: Մասնակիցների թվում էր ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության ղեկավար Թալեբ Ռիֆային: Այստեղ էին նաեւ հայաստանյան զբոսաշրջության զարգացման 4 կազմակերպություններ:

Խորհրդաժողովի աշխատանքին ներկա էր եւ ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Իր ելույթում վարչապետը խոսեց լեռնադահուկային առողջարանների զարգացման առումով Վրաստանի վիթխարի ներուժի մասին՝ նշելով, որ կառավարությունը առանձնակի ուշադրություն է դարձնում այդ ոլորտի զարգացման հարցում:

Խորհրդաժողովում զեկուցումով հանդես եկավ Վրաստանի զբոսաշրջության վարչակազմի ղեկավար Գիորգի Չոգովաձեն:

Եվրոպայի եւ Ասիայի լեռնադահուկային առողջարանների միջազգային խորհրդաժողովը, որն անցկացվում է երկու տարին մեկ անգամ, ընդգրկուն համաժողովներից մեկն է, որտեղ ներկայացված են հայտնի եւ զարգացող ամառային ու ձմեռային առողջարանները: Միջոցառումը նպաստում է փորձի, տեղեկատվության արդյունավետ փոխանակմանը եւ լեռնադահուկային բազաների կայուն աճի ու մրցունակության խթանմանն ուղղված հետագա համագործակցությանը:

ՇԵՄՈՍԱՎԼԵԳԻՍ ՍԱՄՍԱԽՈՒՐՈ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ընթացիկ տարվա ապրիլի 5-7-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD), նաեւ հարկային վարչարարության ներքին եվրոպական կազմակերպության (IOTA) աջակցությամբ, անցկացրեց Արեւելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի պետությունների տարածաշրջանային հանդիպումը:

2013 թվականին տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) կողմից մշակվեց հարկադրման բազայի նվազեցման եւ շահույթի փոխադրման (Bace Erosion and Provit Shifting-BEPS) գործունեության ծրագիրը, որը նախատեսում է պարտադիր 15 միջոցառում: Վերոնշյալ ծրագրի նախաձեռնությունն իրականացվեց մեծ քսանյակի ֆինանսների նախարարության պահանջի հիման վրա: 2016 թվականի փետրվարին, BEPS-ի նախագծի կատարման նպատակով, հիմնվեց BEPS-ի ինկլյուզիվ հարթակը (BEPS Inclusive Framework), ինչը հնարավորություն է ընձեռում շահագրգռված երկրների եւ օրենսդրության համապատասխանեցման հիման վրա ներգրավվել BEPS-ի փաթեթի կատարման գործընթացին: Վերոնշյալ հարթակին Վրաստանը միացավ 2016 թվականի հունիսին եւ, որպես ինկլյուզիվ հարթակի անդամ երկիր, պարտավորություն ստանձնեց BEPS-ի շրջանակներում մշակված չորս հիմնական չափորոշիչների՝ վնասաբեր, հարկային պրակտիկայի վերացման, հարկային պայմանավորվածությունների շահարկման վերացման, ըստ երկրների ստանդարտիզացման հաշվառման, հարկային պայմանավորվածությունների շրջանակներում ծագած վեճերի կարգավորման արդյունավետության բարելավման ներդրման ուղղությամբ:

Հանդիպման բացմանը ելույթ ունեցավ Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին: Նրա խոսքով, տարբեր երկրների ներկայացուցիչները հանդիպման շրջանակներում ունեն բացառիկ հնարավորություն՝ ներկայացնելու իրենց հուզող հարցերը, իրենց դիտողությունները BEPS-ի հիմնական ծրագրի իրականացման բարելավման ուղղությամբ:

Տարածաշրջանային հանդիպմանը մասնակցեցին Չեխիայի, Սլովակիայի, Խորվաթիայի, Սլովենիայի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Լատվիայի, Լիտվայի, Լեհաստանի, Պակիստանի, Քուվեյթի, Թուրքիայի եւ Օմանի ներկայացուցիչները:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿՈՒՐՍԸ, ԿՈՂՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆԸ...

IRI International Republican Institute

Ամերիկյան միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) երկրի մասշտաբով անցկացրեց հերթական սոցիոլոգիական հարցումը: Հարցման արդյունքներով, Վրաստանի բնակչության մեծամասնությունը պաշտպանում է երկրի եվրատլանտյան կուրսը:

Եվրամիությանը Վրաստանի անդամակցությունը լրիվությամբ պաշտպանում է հարցման ենթարկվածների 64 տոկոսը, մասնակիորեն՝ 3 տոկոսը, կտրականապես դեմ է 3 տոկոսը: Հարցման ենթարկվածների 3 տոկոսը հստակ պատասխան չունի: Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությանը, հարցման ենթարկվածների 56 տոկոսը լրիվությամբ պաշտպանում է այն, 26 տոկոսի պաշտպանությունը մասնակի է, 6 տոկոսը դեմ է, եւս 7 տոկոսը կտրականապես դեմ է ՆԱՏՕ-ի անդամակցությանը:

Հարցման արդյունքներով, Ռուսաստանի հետ երկխոսություն վարելու կողմնակից է հարցման ենթարկվածների 53 տոկոսը, 29 տոկոսը մասնակիորեն կողմ է երկխոսությանը, 6 տոկոսը մասնակիորեն դեմ է դրան: Ռուսաստանի հետ երկխոսությանը կտրականապես դեմ է դուրս գալիս հարցման ենթարկվածների 10 տոկոսը: Միաժամանակ, հարցման ենթարկվածների 39 տոկոսը դրական է գնահատում Ռուսաստանի հետ հարաբերություններում Վրաստանի կառավարության քաղաքականությունը: 15 տոկոսի կարծիքով, Ռուսաստանի հետ հարաբերություններում երկրի կառավարության դիրքորոշումը դրական է: Հակառակ կարծիքին է հարցման ենթարկվածների 11 տոկոսը:

Ինչ վերաբերում է Վրաստանում գործող ինստիտուտների գործունեության գնահատմանը, ապա հարցման ենթարկվածների 88 տոկոսը վստահության քվե է հանձնել Վրաստանի Ուղղափառ եկեղեցուն, 86 տոկոսը՝ բանակին, 74 տոկոսը՝ վրացական լրատվամիջոցներին, 59 տոկոսը՝ ոստիկանությանը եւ 55 տոկոսը՝ Վրաստանի նախագահի աշխատակազմին:

Ինչ վերաբերում է բացասական վերաբերմունքին, ապա հարցման ենթարկվածների 70 տոկոսը նման վերաբերմունք է ցուցաբերել ազգային բանկի գործունեության նկատմամբ: Եվս 70 տոկոսը բացասական կարծիքի է քաղաքական կուսակցությունների գործունեության նկատմամբ:



ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 6-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տանը հանդիպում ունեցավ ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Դավիթ Բաքրաձեի հետ:

Ծանոթության բնույթ կրող հանդիպմանը, ԱՄՆ նախագահը նորանշանակ դեսպանին շնորհավորեց դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ: Հանդիպմանը Դավիթ Բաքրաձեն ուշադրությունը բեւեռեց եվրատլանտյան անվտանգության գործում Վրաստանի ավանդի եւ երկրի ժողովրդավարական զարգացման վրա:

Դոնալդ Թրամփը դեսպանին մաղթեց հաջողություններ առաջիկա գործունեությունում:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ, «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ստորագրեց հրաման, ըստ որի գործարարության զարգացման գործակալության փոխարեն հիմնվում է «Արտադրի'ր Վրաստանում» հանրային իրավունքով իրավաբանական անձը (ՀԻԻԱ):

Կարգադրության համաձայն, գործակալության ղեկավարությունն ու աշխատակիցները համապատասխան պաշտոններով կգործեն «Արտադրի'ր Վրաստանում» ՀԻԻԱ-ում:

Նշենք, որ գործարարության զարգացման գործակալությունն ընդգրկված էր էկոնոմիկայի նախարարության կառույցում եւ աշխատում էր գործարարության միջավայրի բարելավման մասնավոր հատվածի զարգացման, փոքր եւ միջին գործարարության ու արտահանումների աջակցության ուղղությամբ: Հենց այդ գործակալությունում էլ իրականացվում էր «Արտադրի'ր Վրաստանում» պետական ծրագիրը:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է 35997 ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ

Պաշտոնական տվյալներով, 2016 թվականին Վրաստանում վավերացվել է 35999 գրանցված իրավախախտում: Նման վիճակագրություն տարածել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը: Այդ տեղեկատվությամբ, գրանցված իրավախախտումներից 20661-ը բացահայտվել է, ինչը կազմել է 57,4 տոկոս:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն, իրավախախտումների 40,5 տոկոսը կատարվել է Թբիլիսիում, 8,3 տոկոսը՝ Քվեմո Քարթլիում, 3,1 տոկոսը՝ Գուրիայում, 10,8 տոկոսը՝ Աջարիայում, 8,9 տոկոսը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթիում, 10,5 տոկոսը՝ Իմերեթիում, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում, 3,2 տոկոսը՝ Սամցխե-Ջավախեթիում, 5,4 տոկոսը Շիդա Քարթլիում, 6,5 տոկոսը՝ Կախեթիում, 2,7 տոկոսը՝ Մցխեթա-Թիանեթիում եւ 0,1 տոկոսը՝ Աբխազիայում:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(7 ապրիլի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.365	2.445
ԵՎՐՈ	2.488	2.623
ՌՈՒԲԼԻ	0.04	0.046
ԴՐԱՄ	0.0037	0.0054

Մարտի 31-ի համեմատությամբ, դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԵՍ ՄԻՇՏ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ ՃԱՆԱՉԵԼ ՎՐԱՑՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բարեբախտաբար, մինչ օրս Վրաստանում չեմ ընդհարվել այնպիսի երեւույթների, որոնք ինձ մոտ միանշանակ հակակրանք առաջացնեին, ինչի հետ երբեք չեմ կարող հաշտվել: Ինձ համար Վրաստանի մասին ամենապայծառ հիշողությունները նրա մայրաքաղաքն է, նրա մարդիկ, եւ այդ հիշողությունները ինձ մոտ կրկին մնացել են մանկությանս տարիներից: Ես շատ եմ սիրում Թբիլիսին, շատ լավ ծանոթ եմ այս քաղաքին, ավելի՝ քան Երեւանին: Պատանեկության տարիներին լայնքով ու երկայնքով շրջել եմ Թբիլիսիի հին թաղամասերում: Եվ հիմա, երբ գործի բերումով լինում եմ քաղաքի որեւէ հին փողոցում, անմիջապես ճանաչում եւ ջերմորեն եմ հիշում, թե ինչպես էի շատ տարիներ առաջ այստեղ զբոսնում: Մանկությանս տարիներին Թբիլիսիի իմ սիրած վայրը Լիսիի լիճն էր: Ես մանրամասն «հետազոտել» էի նրա ողջ շրջակայքը:

Հեքիաթային բնություն

Այս երկուսուկես տարվա ընթացքում ես աշխատանքային եւ ոչ աշխատանքային պատրվակներով բավականին շատ ուղեւորություններ եմ կատարել Վրաստանի տարբեր շրջաններում, քաղաքներում ու գյուղերում: Վրաստանը, անկասկած, հեքիաթային գեղեցկություն ունեցող երկիր է, ինչպես աշխարհագրական տեսանկյունից, այնպես էլ՝ պատմական առումով: Նախ՝ ես նկատի ունեմ հինավուրց հիասքանչ ճարտարապետությունը:

Ինձ դուր եկան շատ վայրեր. ե'ւ ծովափնյա Բաթումին՝ իր աննախադեպ բուսաբանական այգիով, ե'ւ խիստ, բայցեւ գեղատեսիլ Սամցխե-Ջավախեթիի շրջանը՝ իր բազմաթիվ հայաբնակ գյուղերով, որտեղ առանձին քաղաքներ ինձ հիշեցնում են իմ հարազատ Գյումրին: Հիասքանչ է խիստ անտառներով եւ բարձր սարերով շրջափակված Բորժոմին, որտեղ բնությունը հրաշքներ է գործել: Անմոռաց է հինավուրց Մցխեթան՝ իր պատմա-մշակութային բազում հուշարձաններով: Ինչպես ինձ, այնպես էլ՝ Վրաստանի շատ հայաստանցի հյուրերի համար, սիրելի տեսարժան վայրերից մեկը Ջվարիի մենաստանն է, որտեղից հիանալի տեսարան է բացվում բանաստեղծների կողմից գովերգած Արագվի եւ Քուռ գետերի միախառնման վայրը: Այս թվարկումը ես կարող եմ շարունակել, թեպետ եղել եմ Վրաստանի հիասքանչ ոչ բոլոր վայրերում: Վրաստանի բնությունը հիանալի է, պատահական չէ, որ հայտնի առասպելում ասված է, որ Աստված վրացիներին տվել է այն հողակտորը, որը նախատեսել էր իր համար: Վրացական բնությունը՝ իր բարձր սարերով, խիտ անտառներով եւ գեղատեսիլ հարթավայրերով, շատ նման է հայկականին: Կլիմայական տեսակետից էլ մեր երկրները շատ չեն տարբերվում, ուստի ինձ համար դժվար չէր հարմարվելը տեղի կլիմային:

Հինավուրց հարեւանը

Հայաստանում ոչ միայն հիշում են, որ Վրաստանը մեր դարավոր հարեւանն ու բարեկամն է, այլեւ բարձր են գնահատում նրա յուրատեսակ մշակույթը, ավանդույթները, հարուստ ու համեղ խոհանոցը: Դրա վկայությունը թեկուզ այն է, որ բավականին հաճախ են անցկացվում հայ-վրացական փառատոներ եւ մշակույթի, սպորտի, խոհանոցի ոլորտում այլ միջոցառումներ: Այն, թե Հայաստանում որքանով է Վրաստանը ճանաչված զբոսաշրջության տեսանկյունից, վկայում է այն փաստը, որ տարիներ շարունակ հայաստանցի զբոսաշրջիկները այցելությամբ զբաղեցնում են առաջին տեղը: Ընդ որում, եթե նախորդ տարիներին հայաստանցի զբոսաշրջիկների հոսքը ամառային ժամանակահատվածում հիմնականում ուղղված էր ծովի կողմը, ապա այս տարի մեր զբոսաշրջիկների շրջանում Թբիլիսին լայն ժողովրդականության արժանացավ նաեւ ամանորյա տոներին: Պետք է նշել հայկական ընտանիքներում վրացական ուտեստների վիթխարի ժողովրդականությունը: Այդ առումով, բացառություն չի կազմում նաեւ իմ ընտանիքը: Մենք հաճախ ենք պատրաստում չախողբիլի, իսկ շատ հայկական տներում Նոր տարվա, որքանով նկատել եմ, գրեթե 90 տոկոսի սեղանի պարտադիր ուտեստներից է սացիվին: Ինքս չեմ պատրաստում, սակայն գործնականում կնոջս «պատվիրում» եմ վրացական որեւէ ուտեստ: Վերոնշյալ ուտեստներից բացի, շատ եմ սիրում խինկալին եւ խաճապուրին: Օրինակ, ԱՄՆ-ում ապրելիս մորս հաճախ խնդրում էի, որ խաճապուրի պատրաստեր: Այս հանգամանքը հավանաբար կարելի է համարել այն, որ ես ամուր «նստել» եմ վրացական այդ ուտեստի վրա:

Յուրահատուկ վրացիները

Եթե Վրաստանը նկարագրեմ երկու բառով, ապա նրա յուրահատկությունը կոլորիտն ու հյուրընկալությունն են: Ինձ միշտ զարմացնում էր որեւէ անհատական յուրահատկության առկայությունը, որի շնորհիվ, վրացուն հնարավոր էր ճանաչել՝ նախապես չունենալով ոչ մի տեղեկատվություն նրա ազգային պատկանելության մասին: Պարզաբանեմ, օրինակ, կովկասյան ժողովուրդների մոտ շատ են նման գծերը, սակայն ինձ համար երբեք բարդություն չի եղել մարդու մեջ վրացուն ճանաչելը, թե ինչու է այդպես, կոնկրետ պատասխանել չեմ կարող: Գուցե ազգային ինչ-ինչ յուրահատկություններից է դա բխում: Խառնվածքով հայերն ու վրացիները միմյանցից չեն տարբերվում, սակայն, ըստ իս, վրացիներն առավել տաքարյուն են, եւ դա իր արտացոլումն է գտնում անգամ սոցիալ-քաղաքական կյանքում: Օրինակ, հասարակական բողոքները հաճախ ծագում են այն ժամանակ, երբ դրա համար իրական պատճառ չկա, բոլոր դեպքերում՝ ինձ այդպես է թվում:

Նվերներ

Կարծում եմ, որ պատասխանս կլինի սովորական, սակայն անկեղծորեն կպատասխանեմ. սովորաբար, Հայաստանից բերում են կոնյակ, իսկ Վրաստանից տանում են գինի: Բանն այն է, որ դրանք կարելի է ասել, «ամենաընդունելի» կատարյալ նվերներն են: Գերադասությունը հանձնելով դրանց՝ երբեք չես սխալվում: Ինքս էլ վրացական գինու մեծ երկրպագու եմ: Լինելով աշխարհի ավելի քան հարյուր երկրներում եւ համտեսելով շատ լավ գինիներ՝ ես բոլոր դեպքերում գերադասությունը տալիս եմ վրացականին: Այնպես որ, ես էլ միշտ ուրախ կլինեմ նման նվեր ստանալ:

Յուրի Վարդանյանը՝ զավակների հետ (1983 թ.)

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ԱԳՐՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ

Ապրիլի 10-ից ագրոապահովագրության պետական ծրագիրը մոռացվեց, թեպետ գյուղի բնակիչները ագրոապահովագրության անհրաժեշտությունը չեն տեսնում եւ հայտարարում են, որ իրենք «ապահովագրության համար» ավելորդ փող չունեն:

Այս տարի ագրոապահովագրության ծրագրում բոլոր մշակաբույսերի հարցով պետության համամասնակցությունը կկազմի 70 տոկոս, իսկ խաղողի հարցում՝ 50 տոկոս:

Ագրոապահովագրության ծրագրին կարող են մասնակցել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր սեփական տնօրինության տակ կամ փաստացի ունեն առնվազն 5 հեկտար (հատիկայինների բերքի ապահովագրության դեպքում՝ առնվազն 30 հեկտար) հողատարածք, որն ընդգրկված է գյուղատնտեսական նշանակության տարածքներում: Նաեւ ցանկացած բենիֆիցար, ով տնօրինության տակ ունի, օրինակ, 30 կամ 100 հեկտար հողատարածք, որից 5 հեկտարի ապահովագրության համար ֆինանսավորում կարող է ստանալ պետությունից:

Ի տարբերություն նախորդ տարվա, սպասման ժամկետը նվազեցվել է եւ սահմանվել ապահովագրական պոլիսի հանձնման օրվանից չորս օրվա ընթացքում (5-ի փոխարեն): Այս տարի նվազեցվել է նաեւ ագրոապահովագրության սակագինը:

Ագրոապահովագրության ծրագրին կարող է միանալ Վրաստանի տարածքում հավաստագրված ցանկացած ապահովագրական ընկերություն:

Ինչպես հայտարարեց գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության «ագրոապահովագրության ծրագրի» մենեջեր Լեւան Մաղրաձեն, ներկայումս ընթացքի մեջ են ապահովագրական ընկերությունների հետ բանակցությունները: Այսօրվա դրությամբ, ագրոապահովագրության հարցով շահագրգռվածություն է արտահայտել ապահովագրական չորս ընկերություն՝ Ալդագին, Ջի Պի Այ Հոլդինգը, Արդին եւ Ասիի խումբը:

Հատկանշական է, որ չնայած ագրոապահովագրական ծրագրի նորացմանն ու արտոնյալ պայմանների առաջադրմանը, ֆերմերների մեծ մասը չի տեսնում ագրոապահովագրության անհրաժեշտությունը: Նման մոտեցումը մեծ մասամբ պայմանավորված է այս կամ այն մշակաբույսի աճեցման համար բանկերից վերցրած վարկերով, ինչը յուրովի ծանր բեռ է հանդիսանում ֆերմերների համար: Ֆերմերների մի մասը գտնում է նաեւ, որ ագրոապահովագրության հարցում շահագրգռվածության մակարդակի բարձրացման համար պետությունն ու ապահովագրական ընկերությունները որոշակի քայլեր են կատարելու աճեցրած բերքի իրացման հարցի կարգավորման համար, ինչը ֆերմերներին թույլ կտա եկամուտ ստանալ, հետեւաբար կարգավորել ֆինանսական հարցերը:

Հիշեցնենք, որ ագրոապահովագրության նոր ծրագրի համար պետական բյուջեից առանձնացվել է 7 միլիոն լարի: Ագրոապահովագրության պետական ծրագիրը մեկնարկել է 2014 թվականին, եւ անցած երեք տարիների ընթացքում այն որոշակի փոփոխություններ է ունեցել: Ծրագրի նպատակն է ագրոհատվածում զարգացնել ապահովագրությունը, նպաստել գյուղատնտեսության առաջընթացին, նպաստել այդ ոլորտում աշխատողների եկամուտների ավելացմանն ու ոլորտում առկա ռիսկերի (կարկուտ, ջրհեղեղ, փոթորիկ, աշնանային սառնամանիքներ եւ այլն) նվազեցմանը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՈՐԴՆԵՐ

100 ՄԻԱՎՈՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԿԻՐԱՐԿՎԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի՝

Վարորդական վկայականին տրվող միավորների համակարգը կկիրարկվի հուլիսի 1-ից: Ուժի մեջ կմտնի նաեւ, այսպես կոչված, առանց կոնտակտի պարեկության հետ կապված նախաձեռնությունը:

Վերոնշյալ ամսաթվի հարցում համաձայնության հասան իրավաբանական հարցերի կոմիտեի նիստում, որտեղ երկրորդ ընթերցմամբ առանձին հոդվածներով քննարկվեց ՆԳ նախարարության կողմից ներկայացված փաթեթը:

Ինչպես պարզաբանեց ՆԳ նախարարի առաջին տեղակալ Շալվա Խուցիշվիլին, մինչեւ հուլիսի 1-ը մնացած ժամանակահատվածը օգտագործվելու է տեղեկատվական քարոզարշավի համար: Նրա խոսքով, տեղեկատվական քարոզարշավը իրենից ներկայացնում է իրավախախտման կանխման գործընթացի մի մասը: Խորհրդարանին ներկայացված նախագծով միավորների համակարգը տրվում է ինչպես Վրաստանում ստացած վարորդական վկայականներին, այնպես էլ՝ օտար երկրներում ստացված վարորդական վկայականներին:

Քննարկման փուլում միավորների համակարգը ենթարկվեց փոփոխության՝ ճանապարհային առանձին խախտումների դեպքում նվազեցվող միավորների թիվը ավելացվել է, իսկ մեկ այլ խախտումների դեպքում՝ նվազեցվել: Օրինակ, ամրագոտու չօգտագործումը սկզբնական տարբերակով նախատեսում էր 10 միավորի նվազեցում: Նոր տարբերակով դա հասցվել է 5 միավորի: Ավտոմեքենան վարելիս՝ բջջային հեռախոսից օգտվելու դեպքում նախնական 15 միավորի դիմաց նոր տարբերակով նվազեցումը կհասցվի 10 միավորի:

Նախագծի քննարկմանը կարծիք հայտնեցին կարմիր լույսի տակ անցնելու դեպքում, նախատեսված միավորների թվի նվազեցման մասին, ինչի հետ ՆԳ նախարարության ներկայացուցիչը չհամաձայնեց: Նման դեպքի համար նախատեսված էր 10 միավոր: Նոր տարբերակով տուգանքը հասցվել է 15 միավորի:

Օրինանախագծի նախնական տարբերակում նշված է, որ կանգառման կարգի խախտման դեպքում, երբ վթարային իրավիճակ կամ խցանումներ չեն առաջանում, միավորներ չեն նվազեցվում:

Միավորների զրոյականացման դեպքում, վարորդական վկայական ունեցող վարորդի մեքենան վարելու իրավունքը մեկ տարով դադարեցվում է, եւ այն վերադարձնելու համար նա ստիպված նորից քննություն է հանձնելու: Ըստ նախագծի, վարորդը նման իրավունք կունենա տարեկան մեկ անգամ: Օրենսդրական նախագծից հանված է աջաղեկ մեքենաների ներկրման եւ գրանցման արգելքի նախաձեռնությունը, որը նախագծի նախնական տարբերակում գրանցված էր:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ